630
631
632
633
634

82
U-56

W5

ԱՆԴԻՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՎ

ՆԱԻԱԿՈՆԱՏԻՊԱՆԻՆ

ԳԱՂՏՆԻԿԸ

ԽԱՐԳ. Տ. Ց. ՏԷՏԷԵԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՅԼԷՆԱՆ
1962

2011

ԱՆԳԻՏԸ ՔԱՇԻՈՒ

կամ

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Տ. Յ. ՏԷՏԷԵԱՆ

2009

ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ

1962

ՀԱՅ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՍՀՀ-ՈՒՄ

Printed in Turkey

112

408
39

ԸՆԳԻՑԸ ՔԱՀԻՈՒ

կամ

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Թշուառութիւն կրող քրիստոնեայք, զգո՛յշ կեցէք Դ. Խախնամութեան գաղտնիքը դէմ գանգատելու։ Ո՛չչափ ալ խիստ երևին, միշտ պաշտելի են անոնք։ Ան, որ քանի մը օրուան փորձութեանց համար յաւիտենական կեանք մը պատրաստած է զմեզ վարձատրելու, անշուշտ մեզմէ ուրիշ խորհուրդներ ունի, որոց մեր տկար տեսութիւնը չկրնար ներկայ վայրկենիս մէջ թափանցել։ — Համբերեցէք, գուցէ այս է Դ. Խախնամութեան հրամանը, բայց մի՛ կորսէք յոյսերնիդ, և օրհնեցէք զԱն, ինչու որ վարձատրութեան օրը և ժամը Ան սահմանած է, ու վարձքը ան ժամանակը կը ղրկէ, երբ հաճելի երևի Անոր, որուն բռնած ճամբաները միշտ անսխալ են, և իր արարածներուն ամենալաւ բարութեանը համար առնն բան կը ղրկէ։ — Երանի՛ թէ հիմա կարդալու պատմութիւնդ բաւական փորձ մը կարենայ ըլլալ ձեզ։

ՍԷԼԻՄ Տաճկաց կայսեր իշխանութեան ժամանակը (երբ Կիպրոս կը ղ-

Printed in Turkey

զլոյն տիրելէն ետև, սոսկալի նաւա-
տորմիզ մը կը կազմէր Գապին, Սպա-
նիացւոց և Վենետիկի հասարակապե-
տութեան զօրութեանցը դէմ դնելու,
որոնք միաբանած էին իրեն հետ պա-
տերազմելու), Ազիրիկո կղզւոյն մէջ
քսան տարեկան երիտասարդ կին մը
կը բնակէր Անդեղա Գաճիոլի անու-
նով, որուն առաքինութեանցը ու բա-
րեպաշտութեանը վրայ կղզւոյն բոլոր
բնակիչները կը զարմանային։ Անդէն
եօթը տարիէ 'ի վեր կարդուած էր, ու
երեք տարի էր որ իր էրիկը պատե-
րազմելու գացեր էր, ու անատենէ 'ի
վեր ամենևին լուր մը առած չէր։ Իր
յոյսը բոլորովին կորուսած ու ընտա-
նեացը հարկաւորութիւնները ինքնին
հոգալու ստիպուած, արտասուօք և
թշուառութեամբ կեանք մը կ'անցնէր՝
իր երեք զաւակները աղէկ մեծցընելու
համար հոգ տանելով, որոց երկուքը

տղայ էին, ու մէկը աղջիկ Ընոնա ա-
նունով։

Իրենց այս դժնդակ վիճակը օրէ օր
աւելի վատթարանալու վրայ էր։ Ու-
քիալի, Ճէզայիրի պէյը, Սուլթանին
օդնութեան երթալու ատենը՝ Յունաս-
տանի ծովեզերքէն անցնելով, Ղէրի-
կօ կղզին ինչաւ, քաղաքը կողոպտեց և
անոր բոլոր բնակիչները գերի տարաւ։
Ընգեղա զինուորներուն իր տունը մըտ-
նելը լսելով, անմիջապէս դէպ՝ի Ա-
տուածածնի պատկերը վազեց, որուն
առջևը իր երեք զաւակները աղօթք ը-
նել տալու սովորութիւն ունէր, աւաւ-
զան ու իր զգեստին մէջ պահեց։

Ռշնամիները զինքը ու իւր երեք զա-
ւակները բռնելով ցոկանաւը տարին,
ու Կոստանդնուպօլիս հասնելնուն պէս՝
զանազան տէրերու գերիի պէս ծախե-
ցին։ Երկու աղաքները, որոնց անդ-
րանիկը հինգ տարեկան էր, Տարա-

պուլուզի ծովասպատակի մը ձեռքը ինչ-
կան. ծաղկահաս Աննան հրէութենէ
դարձած վաճառական մը գնեց, որ
Ալճէրիա կ'երթար, և մայրերնին ըս-
պանիացի Մոմի անունով ուրացեալի
մը ծախուեցաւ։ — Ահա՛ աս ընտանի-
քը, ինչպէս կը տեսնուի, այսպէս ցիր
ու ցան եղան. բայց պէտք է Նախա-
խնամութեան կամացը թողուլ. երբ իր
հրամաններուն սահմանեալ օրը հաս-
նի, կարող է ամէն անդամները միա-
ցընել։

Անհնար է Անդեղային անպայման
վիշտը նկարագրել, երբ տեսաւ որ
այսպէս իր երեք զաւակներէն զատ-
ուեցաւ. սակայն իր յոյսը Նախախնա-
մութեան վրայ դնելով, այսպիսի ցա-
ւալի ձախորդութեան մը համբերելու
հարկաւոր եղած ոյժը ստացաւ։

Մոմի 'ի սկզբան շատ քաղցրու-
թեամբ վարուեցաւ հետը, որով կը

յուսար որ քրիստոնէութենէ դարձը-
նելով իր կինն ընէ. բայց տեսնելով
որ իր ջանքերը անօգուտ տեղն էին,
երկաթներու մէջ դրաւ և անկէ ետև
անդթութեամբ կը վարուէր հետը։

Տասնուչորս տարի այսպէս անցաւ,
որ ատեն խեղճ Ընդեղան, երբեմն
Ռոմիէն աղատութիւն ստանալով, եր-
բեմն ստորերկրեայ բանտերու մէջ
բանտարկուելով, շատ անգամ իր ա-
չայ առջև քրիստոնէից կոտորման սոս-
կալի տեսարանը տեսեր էր, զորոնք
այս անդութ մարդը ցիցի վարսել կամ
այրել տալով կ'ուրախանար։

Վերջապէս Ռոմի որ քանի մը տա-
րիէ հետէ եկեր Ճէղայիր կը բնակէր,
իր դերիին անդրդուութենէն ձանձրա-
նալով միտքը դրաւ նորէն ծախել
զան. և իմանալով որ իր տանը քով
բնակող վաճառականը կին մը կը փըն-
տռէր երկու կամ երեք տարեկան աղ-

չկան մը խնամատարութեան համար, անոր հետ խօսք ըրաւ, և Ադնգեղան անոր տուաւ։

Այս վաճառականին անունն էր Բայիթօ, որ Ադնգեղան իր կնոջը տանելով ըսաւ. "Ահա աղախին մը ծախուառի, որ մեր փոքր աղջկան հոգ տանի։ Այս բանիս համար քրիստոնեայ որոշեցի, ինչու որ աս կրօնքին կիները աս քաղաքիս մէջ եղողներէն աւելի աղէկ կը մեծցընեն զաւակները"։

Բայիթօյի կինը և Ադնգեղան աս խօսքերէն բան մը չի հասկցան. իրենց սրտին մէջ ուրիշ խորհուրդներ կ'անցնէին. երկուքնին ալ նոյն զարմացմամբ իրարու կը նայէին, և կ'երևար թէ զիրար ճանչնալու յիշողութիւնը մտքերնին բերելու կը ջանային։ Երբոր երկուքնին միանակ մնացին, մէկզմէկ ճանչնալու համար մէկ խօսք մը բաւական եղաւ, նոյն միջոցին երկուք-

նուն բերանէն "Մայր իմ", "Աղ-
ջիկս", լսուեցան, և զիրար գրկընդ-
խառնելով ուրախութեան յորդառատ
արտասուքներով, այսպէս երկար ատե-
նէ ետքը անկարծելի կերպով մէկզմէկ
գտնելնուն վրայ զգացած ուրախու-
թիւնին իրարու յայտնեցին։ Երբ
կարող եղան խօսիլ, Անգեղան իմա-
ցուց աղջկան թէ ինչ ճամբով Աս-
տուած իւր քովը բերեր էր, Աննան
ալ իր պատմութիւնը պատմեց։ Օին-
քը Բայիթօն ծախու առնելով մեծ
խնամքով մեծցուցեր և տասնուերեք
տարեկան հասակին մէջ կարգուելու
տիպեր էր զինքը։

Ասկէ ետքը Անգեղան և իր աղջիկը
գերութենէն ազատելու միջոցներ մը-
տածելէն ուրիշ բան չէին ըներ.
բայց մէկը չի գտան որ կարենար իրենց
բաղձանքը կատարել։ — Ցախախնա-
մութիւնը որ այսպէս զարմանալի կեր-

պով զանոնք միացուցեր էր, դարձեալ իրենց օգնութեան հասաւ, և նոյն իսկ Բայիթոյի ձեռքը անոնց դաղտնի խորհրդոցը փորձը դիւրացուց։

Օր մը, Բայիթո քրիստոնէից վերայ իր կնոջը խօսելով, ըսաւ. "Աս աղանդին ծառայողները այնպէս կամակոր են, որ բան մը չի կրնար յաղթել անոնց, մեր տանը պատկից պերիներուն մէջ հաղիւ տասնուեօթը կամ տասնեւութը տարեկան երիտասարդ մը կայ, որ ութը օրուան մէջ երեք անգամ ծեծ կերաւ՝ իր կրօնքին աղօթքներն ընելու ատեն բռնուելուն համար. բայց այս պատիժը բանի տեղ չի դնելով դարձեալ զանոնք կրկնելը լաւ են"։

Ան երիտասարդին հաւատոյ այսպիսի հաստատութիւնը լսելով Ննա և իր մայրը իմացան որ պիտի կրնան այսպէս հաւատարիմ երիտասարդի մը

ջատահիլ։ Ընտա ժամանակ գտնելով, գնաց գերիներուն արգելարանին վը-
րայ նայող իրենց տանը պատուհանին մէկը քիչ մը բացաւ, և գերին մինակ
տեսնելով թեւը երկնցուց, և թաշկի-
նակով մը նշան ըրաւ որ մօտենայ։
Ասս խեղճը ոտքերուն կերած ծեծին
պատճառաւ չի կրնալով կանգնիլ, ծըն-
կերուն վրայ սողալով մօտեցաւ, և
զինքը կանչողին նետած սանկները
ժողովելէն ետև, քաղցր ձայն մը լը-
սեց, որ հազիւ թէ կը լսուէր. "Ղա-
ղը դարձեալ հոս գտնուէ, բարի ե-
ղիտասարդ"։ Ասս ըսելով, վանդա-
կապատ պատուհանը գոցուեցաւ։

Հետևեալ առտու նոյն ժամուն երբ
բոլոր միւս գերիները գործի գացեր
էին իրմէ զատ, որովհետև աշխատե-
լու կարողութիւնը չէր մնացեր, Ընտ-
նա նոյն նշանը ըրաւ անոր. առաջին
անգամէն աւելի սառակ և նամակ մ'ալ

նետեց, որ աս խօսքերը կը պարունակէր.

"Քրիստոնեայ եղբայր,

"Հաւատքիդ մէջ ունեցած արիութիւնդ խելով, ապահով ենք որ դուն կրօնքդ սորված ես, և թէ Աստուծոյ հաւատարիմ ըլլալովդ անշուշտ մեզ ալ հաւատարիմ ըլլալու ես։ Նոյնէ որ ընկերներուդ մէջ մէկը գտնես, որուն կարենաս խորհուրդնիս հաղորդել. զքեզ ծախու առնելու համար բոլոր ատակը տալու ենք. բայց զմեզ գերութենէ ազատելու համար մեր ցուցնելու միջոցները 'ի գործ դնելու ես։ Մեզ ասոր պատասխանը գրէ, և նոյն տեղէն հաղորդէ մեզ զայն, ուրկից մեր զգացմունքը քեզ իմացուցինք։ Աստուած քու պաշտպանդ ըլլայ, քրիստոնեայ եղբայր։

"Բարէիսմ ֆո"։

Աս նամակը երիտասարդ գերին սիրտը ուրախութեամբ լցուց։ Երկու Նէապոլսեցի գերիներու ցուցուց, որոնք իր հետը ծախուած էին, և որոնց վրայ վստահութիւն ունէր։ Երեքնին մէկտեղ շնորհակալ եղան Աստուծոյ իրենց այսպէս ծառայութիւն

մը տալուն համար, և պատասխանը միաբանութեամբ դրեցին։

Բայց ան պատուհանն այնուհետև չէր բացուեր, ուրկից իրենց երջանկութիւնը կ'ըսպասէին։ Ի՞նչ նեղութիւն և ի՞նչ երկիւղ իրենց խեղճ սրտին մէջ ծագեցաւ։ Վ. երջապէս չորրորդ օրը Ննա Հայիթոյի առջևէն աղատելով, որ բոլոր այսչափ ժամանակ տկարութեանը պատճառաւ տունը մնացեր էր, ուրախութիւն նշանը ըրաւ՝ առջի երկու անգամէն աւելի շատ ստակ սփռելով. ասկէ զատ առասան մը իջեցուց, և երիտասարդ դերին պատասխանը անոր կապեց։ Ննա շուտով զան մօրը տարաւ, և երկուքնին մէկտեղ այս հետևեալ նամակը կարդացին.

«Պաշտպանք իմ,

«Աստուած զձեզ ձեր զգացմանցը մէջ պահէ և ձեր ինձ ըրած մարդասիրութիւնները վարձատրէ։ Ես ձեզի պէս անհամբերութեամբ կը

ոպասեմ քրիստոնէից մէջ դառնալ, ոչ միայն գերութենէ ազատելու, այլև կրօնքս սորվելու համար. քանզի հինգ տարեկան էի, երբ գերի տարին զիս։ Սակայն կրնամ ձեզ վստահացընել թէ՝ ես քրիստոնեայ եմ, թէև միայն մէկ աղօթք մը գիտեմ, որն որ մայրս մանկութեանս մէջ սորվեցուցած է ինձ։ Շատ անգամ կը կրկնեմ զայն, և ասոր համար է որ ինծի հետ այնպէս դէշ կը վարուին. բայց Աստուած կը քաջալերէ զիս որ միշտ շարունակեմ։ Շատ անգամ Եթովպիս մէջ կ'երթի. շատ ատեն չէ՝ Ան ինձ ըսաւ որ քիչ ատենէն պիտի ազատուիմ։ Ձեր հրամանները կատարելու պատրաստ եմ, և երկու Ն.էատրոլեցի ընկերացս վրայ վստահ եմ. մենք մեր կեանքը պիտի զոհենք ձեր խորհուրդը կատարելու համար։

"Անյնոնուէր և անվեղծ Բարեմոտ յեր"։

Այս պատասխանը Անտային և Անդեղային յոյս տուաւ. բայց մօրը սրտին մէջ կորսնցուցած զաւակացը վրայ զգացած ցաւը նորոգուեցաւ. "Այս գերին, ըսաւ, հինգ տարեկան հասակին մէջ իր ազատութիւնը կորսնցուցեր է. անդրանիկ որդիս ալ այս տարիքին մէջն էր, երբ իմ բա-

զուկներուս մէջէն յափշտակեցին զան։
— Երանի թէ ան ըլլար", կրկնեց
Աննան։ Անդեղա իր լացը խափանե-
լով. "Աստուած ամենակարող է, աղ-
ջիկս, պատասխանեց, զիս քովդ բե-
րողը կրնայ զամենքս ալ միացնել. բայց
ոչչափ նոյն տարեկան տղաներ աս
քարբարոսները գերի տարին"։ Այ-
սու ամենայնիւ մտքերնին դրին նա-
մակով երիտասարդին սիլ ըլլալը և իր
ընտանեացը վրայ ինչ ծանօթութիւն
ունենալը հարցընել։ Հետևեալ առ-
տու մտքերնին գործքի դրին, և միւս
օրը պատասխանը առին։ Գերին կ'ի-
մացնէր իրենց որ իր ծնողաց վրայ
քիչ գաղափար ունէր. միայն ան կը
յիշէր որ իր անունը Անտոն էր. թէ
իր մօրը, քրոջը և իրմէ պզտի եղբօ-
րը հետ գերի տարուեր էր, և իր մայ-
րը սովորութիւն ունէր զիրենք մէկ-
տեղ Սուրբ Կուսին պատկերին առ-

ջևը աղօթք ընել տալու։

Ա՛ս տեղեկութիւնները մօրը և աղ-
ջկան մտայ մէջ ամենևին տարակոյս
մը չի թողուցին, և ասոր վրայ զդա-
ցած ուրախութիւնները պարտաւորեց
զիրենք նամակին կարդալը թողուլ
քիչ մը։ Ա՛ննա վերջապէս իր խոս-
վութեանը յաղթելով կրցաւ շարու-
նակել զան։ Դրիտասարդ զերին կ'ի-
մացնէր թէ մինչև ան տարին զիրենք
ծախու առնող Ֆարապուլուզի ծովաս-
պատակին հետն էին. թէ այս ծովաս-
պատակին նաւը Ալէքսանդրիայի նաւէ
մ'երեք ամիս առաջ բռնուելով՝ եր-
կու նաւերը իրարու զարնուեցան, իր
փոքր եղբայրը քրիստոնէից մէջ նե-
տուեր էր, և ինքը չի կրցեր էր անոր
պէս ընել. ու երկու նաւերն ալ վը-
նասուելով իրարմէ զատուեր էին։ Իր
տէրը Ա՛էզայիր քաշուելով, և ծո-
վասպատակութենէ հրաժարելով, Ի՛ր

բոլոր գոյքը և գերիները ծախեր էր, որոնց մէջ կը գտնուէր ինքը և խօսեցած երկու Անէապօլսեցիները, որոնք աս պատերազմին մէջ բռնուեր էին։

"Այն Աստուածը, որ զիս աղջըկանս քովը բերաւ, պոռաց Անգեղան՝ նամակը լմնցընելէն ետքը, ահա հիմա ալ տղաս գտնել կուտայ, մեծ է Աստուծոյ բարերարութիւնը, և ես մեծ յոյս ունիմ որ ամենքս ալ մէկտեղ պիտի միացնէ"։

Մայրը և աղջիկը որոշեցին որ ոմ ըլլալնին երիտասարդ գերին չի յայտնեն մինչև որ գերութենէ ծախու առնուի, վախնալով որ չըլլայ թէ իր չափազանց ուրախութենէն վըտանգաւոր անզգուշութիւն մը պատճառէ։

Աս միջոցիս գերիները ղնելու համար Տոլմէն Կոնֆորտի եղբարց ընկերութեան կողմէ, շատ կրօնաւոր-

ՀՍԽՀ-ССР

ներ եկան, որոնց հետ եպիսկոպոս մ'ալ կար։ Նախ և առաջ Քայիթոյի ունեցած գերիները քննել ուզեցին։ Աս առթիւ Աննա եպիսկոպոսը կրցաւ տեսնել. և օր մը մինակ առեն գըտնելով, Աննա և Անգեղա իրենց բոլոր դիպուածները պատմեցին, և իրենց միտքը յայտնեցին անոր։ Ատոնը և երկու Նէապօլսեցիները ծախու առնուեցան, և աղատութեան նախընթաց օրը, Անգեղա և Աննա Ատոնի նշան ըրին և պատուհանէն ոսկիով և ադամանդներով լեցուն թաշկինակ մը և նամակ մը նետեցին, ետքը պատուհանը դոցուեցաւ, գերին մինակ մնալով փութաց նամակը բանալ, որուն մէջ կարդաց.

« Ընդեակս,

« Քեզմէ գաղտնիք պահելու առեն չէ. զքեզ դերաբերենէ աղատողները ոչ եթէ երկու օտարական, այլ քու մայրդ և քոյրդ են, որոնք իրենց աղատութիւնը քեզմէ կը պահանջեն։ Ե-

պիսկոպոսը տեղնի տեղօքը քեզ պիտի խօսի։ Քայիթօյի հետ գիւղի տունը պիտի երթանք, որ ասկէ երեք մղոն է՝ արևմտեան կողմը ծովէն մէկ մղոն հեռի։ Ն.էապօլսեցիները ծախու առնուելէն ետև ճէղայիր սպասեցընել տուր, որպէս զի հսկէն և քու դառնալդ մեզ իմացընեն։ Իսկ դուն, որդեակս, դնա՛, այդ ոսկին և ադամանդները գործածէ, նաև մը պատրաստէ, և եկու զմեզ այս թշուառ վիճակէն ազատէ։ Աստուած քու հետդ ըլլայ, որդեակս, մոռածէ՝ միշտ որ մենք անհամբերութեամբ քեզ կ'ըսպասենք, և եկու շուտով ազատել զայն, որուն կեանքդ կը պարտիս։ Մնաս բարով։

"ՄԱՅՐ ԹՈ ԱՆԴԵՂԱ"։

Ադատն և երկու Ն.էապօլսեցիները իրօք հետևեալ օրը գերութենէ ազատեցան և իրենց առջի գործը Քայիթօյի գեղի տունին դրութիւնը երթալ օրերով դիտելն եղաւ։ Նաւահանգիստը քննեցին և ժայռերուն ետևը տեղ մը որոշեցին, ուր կրնային նաւէն դուրս ելլել առանց տեսնուելու։

Ադատին մեկնելէն քանի մը օր ե-

առ Բայիզիտ հիւանդացաւ, և անմի-
ջապէս իր ընտանեացը և մարդոցը
հետ գիւղի տունը գնաց, ուր կը յու-
սար որ կ՚առողջանայ, բայց օդափո-
խութիւնը իր առողջութեան անօգուտ
ըլլալէն զատ, իր հիւանդութիւնը
սաստկացուց, և բժիշկները յոյսեր-
նին կտրեցին անորմէ։ Ուստի և տաս-
նուհինգ օրէն ետքը մեռաւ՝ բոլոր
իր հարստութիւնները իր այրի կնոջը
թողլով։

Այս բաները Ճէզայիրի մէջ եղած
տեղը, Անտոն Վէսպուչիս հասեր
էր, և եպիսկոպոսը անոր վրայօք փո-
խարքային հետ խօսելով, ասիկա նաւ
մը շնորհեց, որուն պէտք եղած պատ-
րաստութիւնները սկսաւ մեծ ջանքով
ընել Անտոն։

Ինչպէս որ ճախորդութիւն մը քիչ
անգամ մինակ կը հասնի, այսպէս ալ
մէկ երջանկութիւն մը ետևէն ուրիշ

երջանկութիւն կը բերէ. անհաւատը Նախախնամութեան աս կերպ գործերը դիպուածական պարագաներ կը համարի, բայց ճշմարիտ քրիստոնեան կը հաւատայ որ Աստուած իր բարիքը առատօրէն կը բաշխէ մեր հաւատքը վարձատրելու համար, և հայրաբար պատուհասները շատ անգամ կը կըրկնէ, որպէս զի զինքը ճանչնանք, և զմեզ անցեալ յանցանքներէն մաքրենք։

Երբ եպիսկոպոսը Անտոնին և իր ընտանեացը պատմութիւնը փոխարքային կ'ընէր, Նէապոլսեցի իշխանմը անոր խօսքը ընդմիջեց ըսելով. "Կարծեմ չեմ սխալիր այդ Անտոնին եղբայրը իմ նաւուս մէջն է ըսելու, Տարապուլուղի ծովասպատակին վրայ յարձակող նաւը կը կառավարէի, և նաւերը իրարու մօտեցած ժամանակը իմ նաւուս մէջ նետուող-

ներուն մէջ երիտասարդ մը կար, որ հիմա լսածներուս մէկ մասը պատմած է ինձ, բայց ես բոլոր անոր ըսածները սուտ կը կարծէի"։ Փոխարքան հրամայեց որ երիտասարդը հոն բերեն և եպիսկոպոսը Անտոնը կանչել տուաւ։ Երկու եղբայրները զիրար ճանչցան իսկոյն, և իրարու գրկեցին. իրենց ուրախութիւնը մասնակից եղան նաև բոլոր հանդիսականները, և գերին նոյն միջոցին ազատեցաւ, ու երբ Անտոն իր միտքը անոր իմացուց և Ճէզայիրի մէջ եղածները պատմեց՝ անոր հետ նաւուն պատրաստութիւնները հոգալու եաւէ եղաւ։ Ութը օրուան մէջ նաւը պատրաստուեցաւ, քառասուն հոգի դրին մէջը, և երկու եղբարքն ալ մտնելով, իրենց մայրը և քոյրը ազատելու համար ճամբայ ելան։

Այսպէս Նէապօլսոյ մէջ ամեն բան

յառաջ կ'երթար Անգեղային և որ-
գուցը իշձերը կատարուելու համար։
բայց Ռէզայիրի մէջ այսպէս չէր։
Աստուած իր սիրածներուն երբեմն
յարատև խնդակցութիւն մը կու տայ,
Անգեղային բաղձանքը կատարելով,
անոր վստահութիւնը և անձնանուի-
րութիւնը փորձով մը իմանալ ուզեց։

Բայիթոյի մահուան վրայ հազիւ թէ
ամիս մը անցաւ, որ Ռէզայիրի դա-
տաւորը անոր այրիացեալ կնոջ ան-
բաւ դանձերը լսելով՝ անոր հետ ա-
մուսնանալու առաջարկեց։ Աննա, որ
անատենը յղի էր, պարապ տեղը իր
վիճակը յառաջ բերաւ, որ կրնար ա-
ռաջարկութիւնը մերժելու համար օրի-
նաւոր պատճառ մը ըլլալ. բայց ինչ-
պէս որ դատաւորին իշխանութեան ժա-
մանակը լմննալու վրայ էր, և զան
վերատին նորոգելու համար Աննային
հարստութիւններուն հարկաւորութիւն

ունէր, Ճէզայիրի պէյին ձեռքովը Հրաման ղրկեց որ Քայիթոյի այրի կը-նոջ հետ պիտի կարդուի և Կոստան-դնուպոլիս երթայ։

Ան Հրամանը շանթի հարուածի մը պէս Աննայի և Անդեղայի սրտին ղար-կաւ։ Երկու ամիսի մօտ էր որ Անտոն Ճամբայ ելեր էր, ամեն օր իրեն կ'ըս-պասէին։ Երկու Նէապոլսեցիները գիշերները ծովու երկայնութիւնը հըս-կելով կ'անցընէին, և դատաւորը Ան-նային հետ կարդուելով և իր հեռը տանելովը ամեն յոյսերնին կը խափա-նէր։ Ան ինչ ձախորդութիւն էր. և ինչ Ճար գտնել պէտք էր արդեօք ասոր։

Սակայն բարեպաշտ Անդեղա բնաւ չվհատեցաւ. "Ոչ, կ'ըսէր իր աղ-ջկանը, Աստուած որ արդէն այնչափ անդամ յայտնի կերպով մը իր պաշտ-պանութիւնը մեզի ցուցուց, իր գոր-

ծը անկատար պիտի չի թողու։ Զ՝ երմեռանդութեամբ աղօթք ընենք անոր որ այն վտանգաւոր վայրկենին մէջ երբեսէ չի ձգէ զմեզ, և մեր խնդրոյն յաջողութեանը համար Յիսուսի աղաչենք, որ գլխաւորաբար վշտացեալները կը սիրէ, շատ անգամ ես անոր զօրութիւնը տեսեր եմ, դարձեալ այսօր մեր փաստաբանը պիտի ըլլայ Ան. և եթէ Աստուած մեր ազատութիւնը չուզէ, զոնէ քաջութեամբ մեր սոսկալի ճախորդութեան համբերելու ոյժ պիտի տայ"։ Երկուքնին մէկտեղ աստիճարիշ խորհուրդներով վառուած մեծ յուսով աղօթք կ՝ընէին։

Այսու ամենայնիւ Աստուած իրենց ուխտը չընդունեց կ՝երևի, դատաւորը իր որոշմանը վրայ հաստատ կեցաւ, և արդէն հարսանեկան հանդէսին օրը որոշեր էր, միայն հնազանդիլը մնաց։ Բայց Աստուած ուրիշ կերպ կը հրա-

մայէր։ Սուրբ Գրոց մէջ “Աստուած Յաւորդ Աստուած” կոչուիլը առանց պատճառի չէ. չուզեր որ մէկը իր բարութեան սքանչելեացը դէմ դնել կարենայ. և ան ատեն իր ամենակարողութիւնը ցուցընել կ’ուզէ, երբ ամեն բան մարդոց առջև կորսուած կ’երևի։ Ընոր դժուար բան չկայ, և մէկը չի կրնար արդելք ըլլալ անոր. մեր տկար միտքը անոր խորհրդոց խորութեանը մէջ չկրնար թափանցել, և անոր անողոքելի երևցած ժամանակը անդամ՝ իր մարդասիրութիւնը խիստ անակնկալ և խիստ կենդանացուցիչ միխիթարութիւններ կը պատրաստէ մեզ։

Իր ապառնի կինը տեսնելու անհամբերութեամբ, որուն հարստութեան վրայ կը ցանկար և որուն համբաւը զինքը կը հրաշացնէր, դատաւորը առտու մը յանկարծ անոր տունը գնաց։ Մայրը և աղջիկը ան միջոցին պատկե-

ին առջևը աղօթք կ՚ընէին. երբ ներս մտաւ, տեսած առաջին առարկայ-ին վրայ այնպէս յանկարծ ապշուութեամբ զարնուեցաւ որ չի կրցաւ բըռնել զինքը։ Ան պատկերը կը ճանչնար, ինքն ալ այնչափ անգամ ան պատկերին առջևը աղօթք ըրած էր։ Ի՛նչպէս արդեօք ան տեղ կը գտնուէր հիմա։ Իր անստուգութիւնները անմիջապէս վերցան. ակնթարթ աչքով մը Անգեղայի նայելով, պաղ քրտինք մը իր դէմքին վրայ ծածկեց, ոյժը կտրեցաւ. և միայն ան խօսքերը կրցաւ հատկաբաղ ձայնով բերնէն հանել. "Ա՛նգեղա, դո՞ւն ես"։

Անգեղա անմիջապէս իր ամուսնոյն բազկաց մէջ վազեց. անոր խելքը գըլուխը բերաւ, և իր սրտառուչ ջանքերովն ու խօսքերովը քաջալերեց զան, բայց յանցաւորը խիստ խորունկ շըփոթութիւն մը զգալով աչքերը անոր

վրայ վերցընելու չէր համարձակեր. "Ամօթ ինծի, պոռաց վերջապէս՝ երբ ատեն անցնելով քիչ մը ոյժը տեղը եկաւ, ամօթ ուրացելոյս. տե՛ս ինչ վիճակի մէջ կը գտնես զիս, ո՛ Ընդեղա, դուն որ քու քաջութեամբդ իմ վատութիւնս ինձ կ'ըղգացընես"։

Ի՛նչպէս փոխուեցան հիմա այն գաղափարները, որով այս տունը եկեր էր, և Ատուած իր մեծ փառացը և այս ցրուեալ ընտանեաց բարութեանը համար ամեն բան պատրաստեց։ Ընդեղա պատմեց Ռաճիոլլին թէ ինչպէս երկար ատեն երբեմն ձախորդութիւն կրելով, երբեմն Ցախախնամութեան բարիքը վայելելով անցուցեր էր, և ինչպէս դերի տարուելէն, ծախուելէն և իր որդւոցմէ զատուելէն ետքը՝ ամենքն ալ գտեր էր։ Ռաճիոլլին ալ սկսաւ իր աղէտները

պատմել. ըստ ասոր թէ ինչպէս դե-
ռի տարուելով, և ցիցը քամուելու սոս-
կալի տանջանքէն վատութեամբ վախ-
նալով իր կրօնքէն դարձեր էր, թէ
ինչպէս Ն'էզայիր պէյին ձեռքէն ա-
զատուեր էր, և անկէ քիչ մը ետքը
դատաւորութեան իշխանութիւնը ստա-
ցեր էր։ "Բայց բոլոր աս պաշտօն-
ներէս կը հրաժարիմ, շարունակեց աշ-
խուժիւ, ասկէ ետքը միայն Աստուծոյ
և ընտանեացս համար կ'ուզեմ ապրիլ։
Երկար ատեն խղճմտանացս խայթերուն
դէմ դրի, բայց այսօր, նոյն ինքն
Աստուած է որ այս բարեպատէհ առի-
թը տուաւ ինձ այն շղթաները խորտա-
կելու, որոնցմով յօժարութեամբ կա-
պուեր էի. ո՛չ, երբէք այնչափ ապե-
րախտ պիտի չըլլամ ես իր բարիքը չըն-
դունելու. ժամանակը հասած է, ես ալ
ձեզի հետ կը մեկնիմ"։

Այսպէս ցաւալի երևցող աղէտքին

յաջող վախճանը ուրախութեամբ լը-
ցուց Ադեղայի և իւր աղջկան սիրտը։
Երեքնին մէկտեղ Ջերմեռանդ աղօթք
մը ընելէն ետքը՝ դատաւորին փախ-
չիլը ապահովցնելու համար նոր միջոց-
ներ գտնելու զբաղեցան։ Աննան կը-
նութեան ուզելը խիստ կը դիւրացնէր
գործը։ Քաճիոլի իր գործքերը կար-
գի դնելու համար արտորնօք Ղէղա-
յիր դառնալով, իր խիստ թանկագին
ինչքը բեռներ կապել տուաւ, և ա-
ռանց կասկած մը տալու Աննային ղբր-
կեց, որպէս թէ անոր հետ պիտի ա-
մուսնանայ։ Անկէ ինքը քաղաքէն
դուրս իր զուարճութեան համար ու-
նեցած տունը անցաւ և նշան տուած
ժամանակին մեկնելու համար պատրաստ
գտնուեցաւ։ Հատ ատեն չսպասեց
հոս, ինչու որ երեք օրէն Անտոն ո-
րոշեալ տեղը հասաւ, Նէապօլսեցւոց
մէկը, որոնք ամեն գիշեր կը հսկէին,

անմիջապէս Ընդեղային և իւր աղջկան իմաց տալու դնաց, և միւսը դատաւորին տունը վազեց։ Շուտով բոլոր ընտանիքը միացան, և առաջուց պատրաստութիւնները տեսած ըլլալով, չուշացան նաւը մտնել և Պարպարոստանի ծովեզերքէն հեռանալ՝ պարագային պահանջած ամենայն փութով և ամեն տեսակ զգուշութիւններով։

Գովելի խոհեմութեամբ մը Ընտոնի եղբայրը մինչև ան ժամանակը զինքը չճանչցուցեր էր՝ վախնալով որ չըլլայ թէ իր մօրը և քրոջը չափազանց ուրախութիւնը իրենց բռնած ճամբուն յաջողութեան համար պահանջուած աբրդութեանը և ոգւոյ հանդարտութեանը վնասէ, և նոյն պատճառաւ անոնք ալ Ընտոնի բան մը չըսեր էին իրենց հօրը համար։ Ամեն տեսակ վտանգներէ ազատելէն ետքը՝ երբ ընդարձակ ծովուն մէջ հասան, երկու

կողմէն ալ իրենց ուրախութիւնը յայտնեցին։ Ամեն խորհրդէ աղատ և այնուհետև իրենց երջանկութեանը վրայ հաւաստի ըլլալով՝ այս գերդաստանին անդամներուն սիրտերը սիրոյ, ուրախութեան, և երախտագիտութեան կիրքով շարժեցան։ Ջերմեռանդութեամբ օրհնեցին այն գթառատ Նախախնամութիւնը, որ զիրենք ամենքն ալ ձեռքերնունմէն բռնելով իրարու քով տարաւ։

Քանի մը օրուան յաջող Ճանապարհորդութենէ մը ետև՝ Լիվորնո հասան, ու անկէ Հռոմ անցան, ուր Կոնֆալոնի եղբարց ընկերութիւնը անթիւ բազմութեամբ ժողովրդոց զաղտնք ընկալաւ։

ԿՈՂՄԱՏՈՒՐ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ATELIER DE RELIURE
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni
Չսմմաքճըլար Մեծ Նոր [illegible] 5-6

630
631
632
633
634

2013